ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/15

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԵՌՈՒՍՏԱԿԱՅԱՆԻ ՎԹԱՐԱ-ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ք. Երևան 25 08 2021թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն **Մ. Միլիտոնյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Այպոշին»** ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն **Հ. Պողոսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հետագա համատեղ հիշատակման՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***«ՀՀՌՑ» ՓԲԸ Վանաձորի հեռուստակայանի վթարա-պրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակառուցման և վերանորոգման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Հավելված 1-ով կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի Հավելված 1-ով նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ***20 /քսան/*** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված

ամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 36 800 000 (երեսունվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից՝ 6 133 333 (վեց միլիոն հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ -ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի հավելված 1-ով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի

փով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն

չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ Աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և

ասորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն Պայմանագիրը կազմված է 16 /տասնվեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՀՀՈՑ» ՓԲԸ	**«Այպոշին» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Ակբա- բանկ» ԲԲԸ Լոռի մ/ճ
Հ/Հ՝ 1570027609970100	Հ/Հ՝ 2200533356870000
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 06933045
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«25» 08 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/15 պայմանագրի

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ դրամ

Աշխատանքի							կատարման		
								Ժամկետը	
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը, Տեխնիկական բնութագիրը*	չափ-ման միա-վորը	միավորի գինը հազ. ՀՀ դրամ	ընդհանուր գինը հազ. ՀՀ դրամ	ընդհա-նուր քանա-կը	հասցեն	սկիզբ	ավարտ
1	45221142	«ՀՀՌՑ» ՓԲԸ Վանաձորի հեռուստա-կայանի վթարապրո-ֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերա-կառուցում և վերանորոգում	դրամ	36 800 000	36 800 000	1	ՀՀ,Լոռու մարզ, ք.Վանաձոր, Սարի թաղ 3-րդ փողոց,16/1	պայմանա-գրի կնք-ման օրվանից	90 օր

Չափաբաժին 1

«ՀՀՌՑ» ՓԲԸ Վանաձորի հեռուստակայանի վթարապրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակառուցում (սեյսմազինվածության բարձրացում) **և վերանորոգում**

- Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն ՀՀ- ում գործող քաղաքաշինության, սեյսմակայուն շինարարության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերին՝ /ՀՀՇՆ,ԳՕՍՏ, ՀՍՏ և այլն/:
- Լիցենզավորված շինարարական կազմակերպության ինժեներատեխնիկական կազմը պետք է բավարարի աշխատանքի բնույթից բխող պայմաններին և պահանջներին:

Օգտագործվող բոլոր շինարարական նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան 10 տարվա երաշխիքային ժամկետ:

Աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 5 (հինգ) տարի:

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

հազ. ՀՀ դրամ

№ n/n	Աշխատանքի անվանումը	Չափ. Միավ	Քանակ	Միավորի	Ընդամենը	Արժեքի կշիռը %
Բաժին I	*№ 1. Գոյություն ունեցող հատվածքի քանդում*				**1222,440**	**4,04**
1	Գոյություն ունեցող ասբոշիֆերային տանիքի քանդում	$մ^2$	125	0,250	31,250	
2	Տանիքի փայտանյութի քանդում	$մ^3$	6	30,000	180,000	
3	Ջերմոմեկուսիչ շերտի քանդում միջպանելային շլակ	$մ^3$	1,5	2,500	3,750	
4	Ե/բ միջպանելային բետոնի քանդում	$մ^3$	1,35	12,000	16,200	
5	Փայտե պատուհանների քանդում /պատուհանագոգերի հետ միասին/	100 $մ^2$	0,149	100,000	14,900	
6	Պատերի սվաղի քանդում, կարերի մաքրումով և լվացումով	100$մ^2$	2,5	35,000	87,500	
7	Առաստաղի սվաղի քանդում, կարերի մաքրումով և լվացումով	100$մ^2$	1,51	35,000	52,850	
8	Դռների քանդում	100$մ^2$	0,072	150,000	10,800	
9	Ե/բ ծածկի սալի ապամոնտաժում	հատ	14	3,000	42,000	
10	Պատերի քանդում /միջնորմեր 20սմ /	$մ^3$	13,7	12,000	164,400	
11	Պատերի քանդում տուֆից	$մ^3$	40,8	12,000	489,600	
12	Պատուհանի նոր բացվածքի բացում տուֆե պատում	$մ^3$	0,72	12,000	8,640	
13	Պատերի վրայից սվաղի քանդում-ճակատային մաս	100$մ^2$	0,15	25,000	3,750	
14	Շին.աղբի բարձում ինքնաթափին	տն	30,5	1,700	51,850	
15	Տեղափոխում 10կմ	տն	30,5	2,100	64,050	
16	Պատուհանների մետաղական ցանցաճաղերի ապամոնտաժում	տն	0,006	150,000	0,900	
Բաժին II	*№ 2.. Համաշինարարական աշխատանքներ*				**26697,192**	**87,38**
	2.1 Հողային աշխատանքներ ժապավենային հիմք					
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	23,75	3,500	83,125	
2	Բնահողի հետլիցք ձեռքով	$մ^3$	10	2,000	20,000	
3	Ետլիցքի բնահողի տոփանում	100$մ^3$	0,01	250,000	2,500	
8	Բետոնի կազմաքանդում	$մ^3$	1,63	12,000	19,560	
9	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100$մ^2$	0,15	80,000	12,000	
	2.2 Կետային սյուն 1					
10	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսորակ	$մ^3$	2,45	3,500	8,575	
11	Բնահողի հետլիցք ձեռքով	$մ^3$	2,13	2,000	4,260	
12	Ետլիցքի բնահողի տոփանում	100$մ^3$	0,02	250,000	5,000	
13	Ավելորդ բնահող համահարթեցում	100մ2	0,01	80,000	0,800	
	2.3 Շրջանակ Շ-1					
14	Բետոնի կազմաքանդում	$մ^3$	0,55	12,000	6,600	
15	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսորակ	$մ^3$	4,9	3,500	17,150	
16	Բնահողի հետլիցք ձեռքով	$մ^3$	3,27	2,000	6,540	
17	Ետլիցքի բնահողի տոփանում	100$մ^3$	0,03	250,000	7,500	
18	Ավելորդ բնահող համահարթեցում	100մ2	0,16	80,000	12,800	
	2.4 Սալվածք					
19	Ավելորդ բնահող համահարթեցում	100մ2	0,28	80,000	22,400	
20	Ետլիցքի բնահողի տոփանում	100$մ^3$	2,8	250,000	700,000	
	№ 3.Հիմքեր					
	3.1 Ժապավենային հիմքեր					
1	Բազալտե խճից նախաշերտ , h=100մմ	$մ^3$	1,65	11,000	18,150	
2	Անցքերի շաղափում պատերում d-18մմ,l-1200մմ,	100անցք	0,36	120,000	43,200	
3	Խամքարաբետոնե հիմքերի կառուցում 60/40՝ բետոն B15 դասի	$մ^3$	13,75	50,000	687,500	
4	Ամրան 10	տ	0,06	600,000	36,000	

	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մ2	0,49	240,000	117,600	
	3.2 Կետային հիմք					
6	Բազալտե խճից նախաշերտ , h=100մմ	մ^3	0,1	11,000	1,100	
7	Ե/բ հիմքի իրականացում սյան տակ B15 բետոն	մ^3	0,32	58,000	18,560	
8	Ամրան 10	տ	0,07	600,000	42,000	
9	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մ2	0,03	240,000	7,200	
	№ 4. Պատեր					
1	Պատերի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով -քանդված քարերից	մ^3	25	15,000	375,000	
2	Պատի շարվածքի ամրանավորում	տն	0,343	650,000	222,950	
3	Անցքերի շաղափում պատերում d-20մմ,l-750մմ,	100անցք	0,72	90,000	64,800	
4	Պատերի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ^3	7	33,000	231,000	
	№5. Ուժեղացում					
	5.1 Պատերի ուժեղացում					
1	Անցքերի շաղափում պատերում d-8մմ,l-250 մմ,	100անցք	0,78	50,000	39,000	
2	Խարիսխի տեղադրում անցքերում Φ12 հիմքերում	տն	0,042	600,000	25,200	
3	Մետաղական կարկասի պատրաստում և տեղադրում արտաքին պատերի վրա (пилястр)	տն	0,009	150,000	1,350	
4	Ամրան 10մմ	տն	0,024	600,000	14,400	
5	Մետաղական ժապավեն 10մմ	կգ	0,065	1,200	0,078	
6	Պատերի ուժեղացում ե/բ շապիկով - պատերի մաքրում, կարերի բացում, ամրանային ցանցի պատրաստում տեղադրում, բետոնացում	մ^3	29,66	100,000	2966,000	
7	Ամրան 8մմ		1,09	650,000	708,500	
8	Արտաքին պատերի ուժեղացում ե/բ շապիկով - պատերի մաքրում, կարերի բացում, ամրանային ցանցի պատրաստում և տեղադրում,սվաղում	մ^3	5,52	85,000	469,200	
9	Պատի ամրանավորում ցանցով Вр,Φ5/150*150մմ/	տն	0,46	650,000	299,000	
10	Բացվածքների ուժեղացում մետաղական շապիկներով	տն	0,74	150,000	111,000	
11	Մետաղական անկյունակ 75x5	տն	0,66	700,000	462,000	
12	Մետաղական ժապավեն	տն	0,08	1200,000	96,000	
13	Ամրան12մմ	տն	0,01	600,000	6,000	
14	Անկեր M12	կգ	60	0,700	42,000	
	5.2 Շրջանակ Շ-1	-	-			
15	Բազալտե խճից նախաշերտ , h=100մմ	մ^3	0,35	11,000	3,850	
16	Բետոնե նախաշերտ 50մմ հաստությամբ B7-5	մ^3	0,175	52,000	9,100	
17	Ե/բ միաձույլ հիմնային հեծանի կառուցում B-20 բետոնից ՇՄ-1	մ^3	1,3	80,000	104,000	
18	Ամրան Ա - 1 դասի Φ 8	տն	0,027	650,000	17,550	
19	Ամրան Ա - 3 դասի Φ 25	տն	0,125	600,000	75,000	
20	Ամրան Ա - 3 դասի Φ 16	տն	0,011	600,000	6,600	
21	Անցքերի շաղափում պատերում d-16մմ, l-700մմ,	100անցք	0,24	90,000	21,600	
22	Խարիսխի տեղադրում անցքերում Φ16	տն	0,002	600,000	1,200	
23	Բետոնի լրացում	մ^3	0,2	58,000	11,600	
24	Ե/բ միաձույլ սյուների կառուցում B-20 բետոնից U-1	մ^3	1,3	90,000	117,000	
25	Ամրան Ա - 1 դասի Φ8	տն	0,039	650,000	25,350	
26	Ամրան Ա - 3 դասի Φ 20	տն	0,095	600,000	57,000	
27	Տափօղակ /Թերթավոր թերթ /10մմ	տն	0,008	750,000	6,000	
28	Ե/բ միաձույլ պարզունակների կառուցում B-20 ՇՀ-1	մ^3	1,2	80,000	96,000	
29	Ամրան Ա - 1 դասի Φ8	տն	0,0264	650,000	17,160	
30	Ամրան Ա - 3 դասի Φ 22	տն	0,0638	600,000	38,280	
31	Ամրան Ա - 3 դասի Φ 16	տն	0,0381	600,000	22,860	
32	Ամրան Ա - 3 դասի Φ 20	տն	0,0519	600,000	31,140	

33	Տափօղակ /Թերթավոր թերթ /10մմ	տն	0,03	750,000	22,500	
	5.3 Ե/բ Կետային հիմք 1					
34	Բազալտե խճից նախաշերտ , h=100մմ	մ³	0,1	11,000	1,100	
35	Ե/բ կետային հիմքի իրականացում սյան տակ ԿՀ-1	մ3	0,32	80,000	25,600	
36	Ամրան 10մմ A500C	տ	0,00659	600,000	3,954	
37	Ե/բ միաձույլ սյուների կառուցում B-15 բետոնից Ս-2	մ³	0,36	90,000	32,400	
38	Ամրան 20մմ A500C	տ	0,04495	600,000	26,970	
39	Ամրան 8մմ A240	տ	0,0129	650,000	8,385	
	5.4 Քիվ և գոտիներ					
41	Քիվի գծային շարվածքի քանդում	մ	42,8	1,500	64,200	
42	Ե/բ միաձույլ գոտու կառուցում B -20 բետոնից ՀԾ-1	մ³	3,51	80,000	280,800	
43	Ամրան Ա - 1 դասի Φ8	տն	0,109	650,000	70,850	
44	Ամրան Ա - 3 դասի Φ 14	տն	0,317	600,000	190,200	
45	Ե/բ միաձույլ գոտու կառուցում B -20 բետոնից ՀԾ-2	մ³	4,65	80,000	372,000	
46	Ամրան Ա - 1 դասի Φ8	տն	0,1223	650,000	79,495	
47	Ամրան Ա - 3 դասի Φ 14	տն	0,2994	600,000	179,640	
48	Ե/բ միաձույլ գոտու կառուցում B -20 բետոնից ՀԾ-3	մ³	0,65	80,000	52,000	
49	Ամրան Ա - 1 դասի Φ8	տն	0,0163	650,000	10,595	
50	Ամրան Ա - 3 դասի Φ 14	տն	0,0398	600,000	23,880	
51	Ե/բ միաձույլ գոտու կառուցում B -15 բետոնից ՀԾ-4	մ³	1,46	65,000	94,900	
52	Ամրան Ա - 1 դասի Φ8	տն	0,0512	650,000	33,280	
53	Ամրան Ա - 3 դասի Φ 14	տն	0,1229	600,000	73,740	
	5.5 Խարիսխներ					
54	Անցքերի շաղափում պատերում d-10մմ, l-500մմ,	100 անցք	7,2	50,000	360,000	
55	Խարիսխի տեղադրում անցքերում Φ10	տն	0,23	600,000	138,000	
	5.6 Բարավորումներ				0,000	
56	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում B-15(200) բետոնից	մ³	0,416	65,000	27,040	
57	Ամրան Ա - 240 դասի Φ6	տն	0,005	650,000	3,250	
58	Ամրան Ա 500C դասի Φ12	տն	0,027	600,000	16,200	
	5.7 Ծածկի ամրացում					
	Ե/բ միաձույլ ծածկի սալ /ՄՍալ-3/ Ամրանային ցանց 8-3					
59	Ե/բ միաձույլ ծածկի սալերի կառուցում B-20 բետոնից /ՄՍալ-3/	մ³	10,4	80,000	832,000	
60	Ամրան A-500C Φ8մմ ք200	տն	0,932	600,000	559,200	
51	Ե/բ միաձույլ հեծանների կառուցում B-20 KP-1	մ³	0,9	80,000	72,000	
62	Ամրան Ա240 դասի Φ 8	տն	0,066	650,000	42,900	
63	Ամրան Ա 500C Φ 10	տն	0,151	600,000	90,600	
	№ 6. Սպասարկման հորի կարճացում					
1	Խամքարաբետոնե հիմքերի կառուցում 60/40՝ բետոն B15 դասի	մ³	0,45	50,000	22,500	
2	Բնահողի հետլիցք ձեռքով	մ³	4	2,000	8,000	
3	Ետլիցքի բնահողի տոփանում	100մ³	1,5	250,000	375,000	
	№ 7. Տանիք				0,000	
1	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում շլակով	մ³	24,5	11,000	269,500	
2	Ծպեղնատոտքի տեղադրում (մարթակ, կանգնակ, մաուերլատ,թեքան, կապ) հականեխիչ մշակված	մ³	7,1	200,000	1420,000	
3	Հեղյուս	տն	0,3	800,000	240,000	
4	Ամրան/ ճարմանդ/Φ10	տն	0,2	600,000	120,000	
5	Տանիքի ծածկի կառուցում ձևավոր ցինկապատ գունավոր թիթեղից փայտե կավարամածով ԿՊ-25-0,5 Կորեա	100մ²	2,25	650,000	1462,500	
6	Չորսու /կավարամած/50*50մմ	մ³	0,75	200,000	150,000	
7	Ինքնաշաղաթող հեղյուս 6 հատ/1մ2	հատ	300	0,030	9,000	
8	Ջրհորդանի կառուցում տախտակամածով ցինկապատ թիթեղից 0,5մմ	100մ	1,3	650,000	845,000	
9	Փայտե կարկասի հակահրդեհային լաքապատում	մ³	9,85	10,000	98,500	
10	Կավարամածի հակահրդեհային լաքապատում	100մ²	2,44	80,000	195,200	
11	Պիպի կառուցում g/թիթեղից ներկված/ 0,5 մմ /	100մ²	0,2	550,000	110,000	
12	Ջագար g/թիթեղ 0,5 մմ, D = 120մմ	հատ	4	7,000	28,000	

13	Զրթափ խողովակ g/թիթեղ 0,5 մմ, D=120մմ ,	մ	14	4,200	58,800	
14	Ծունկեր g/թիթեղ 0,5 մմ, D =120մմ	հատ	8	3,500	28,000	
15	Շերտափեղկերով ձեղնալուսամուտների պատրաստում հականեխիչ նյութով մշակումով	հատ	2	30,000	60,000	
16	Ձեղնալուսամուտների փեղկերի երկտակ յուղաներկում	մ2	1,06	1,600	1,696	
17	Ձեղնալուսամուտների կողերի թիթեղապատում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ հաստ.	քմ	21,6	5,500	118,800	
18	Ձեղնալուսամուտներին հարող տարածքի փայտյա տախտակամածի պատրաստում հականեխիչ նյութով մշակումով	խմ	0,72	200,000	144,000	
19	Ձեղնալուսամուտներին հարող տարածքի թիթեղապատում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ հաստ.	քմ	14,4	5,500	79,200	
20	Փոքր ծածկեր g/թիթեղից 0,5մմ հաստ,	100մ^2	0,04	550,000	22,000	
21	Քիվի կառուցում /g/թիթեղից 0,5մմ հաստ,/Տանիքի դուրս եկած մաս/	100մ^2	0,65	550,000	357,500	
22	Ջյունապաշտպանիչ արգելք L=2,0մ ,24 հատ	հատ	24	4,500	108,000	
	№ 8. Հատակներ					
	8.1 Տեխնիկական տեղամաս					
1	Հատակի գրունտի տոփանում խճով	100մ2	1,11	75,000	83,250	
2	Հատակների նախապատրաստական շերտի իրականացում B12.5	մ3	8,8	50,000	440,000	
3	Բետոն հատակաների իրականացում 30 մմ հատությամբ B12.5 բետոնից	100մ2	1,11	210,000	233,100	
	8.2 Ադմինիստրատիվ մաս					
1	Բազալտե խճից նախաշերտ 5-40 մմ ֆրակցիայի, h=200մմ	մ^3	15,56	11,000	171,160	
2	Բետոնե նախաշերտ 80մմ հաստությամբ B15	մ^3	6,23	52,000	323,960	
3	Բետոնի նախաշերտի ամրանավորում 100x100x5 մմ Bp ցանցով	տն	0,22	650,000	143,000	
4	Հարաթեցնող շերտի իրականացնում M100 20մմ	100մ2	0,78	240,000	187,200	
5	Հատակների պատրաստում կերամգրանիտից ոչ պակաս 8մմ հաստ, Իրան	100մ^2	0,578	900,000	520,200	
6	Շրիշակների պատրաստում կերամգրանիտից ոչ պակաս 8մմ հաստ, h=100մմ	100մ^2	0,04	900,000	36,000	
7	Լամինատե հատակների պատրաստում ոչ պակաս 8մմ հաստ, 32 դասի / ներառյալ շրիշակները և սպունգը /	100մ^2	0,145	800,000	116,000	
8	Ցեմենտային հարթեցուցիչ նախաշերտի պատրաստում 25մմ հաստ.	100մ^2	0,06	250,000	15,000	
9	Հատակի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի մածիկով	100մ^2	0,055	240,000	13,200	
10	Կերամիկական հատակների պատրաստում ոչ պակաս 6մմ հաստ,	100մ^2	0,055	900,000	49,500	
	№ 9. Բացվածքներ /Դռներ, պատուհաններ,					
1	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող ներառյալ տեղադրում	մ^2	7,09	29,000	205,610	
2	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող ներառյալ տեղադրում	մ^2	7,35	32,000	235,200	
3	Բարդ փական	հատ	3	17,000	51,000	
4	Սպիտակ մետաղապլաստե B դասի ներքին դռան բլոկի /ոչ պակաս 60մմ/ տեղադրում/ ներառյալ ապակեփաթեթը 4+4մմ և սենդվիչ պանել	մ^2	9,64	50,000	482,000	
5	Արցունքաթափեր սպիտակ գունավոր ցինկ թիթեղից 0,5մմ	100մ^2	0,0156	550,000	8,580	
6	Հակամիջատային ցանցի տեղադրումով, ալյումիե շրջանակ, սպիտակ, ներառյալ ծղնիներ	հատ	6	30,000	180,000	
7	Պատուհանների մետաղական ցանցաճաղերի հետ տեղադրում առանց արժեքի	տն	0,006	150,000	0,900	
8	Պլաստմասե հայկական սպիտակ պատուհանագոգերի պատրաստում 40սմ լայնությամբ ներառյալ խցանները	քմ	2,88	5,100	14,688	
9	Մուտքի, մետաղական 2070x900x50մմ, L/R, մետաղի հաստությունը 0,5մմ, երկկողմանի երեսպատված ջրակայուն լամինատով 12 մմ, տեղադրում, ներառյալ փականներ, բռնակ և տեղադրման նյութերը	հատ	1	210,000	210,000	
10	Դարպասների և ճաղաշարերի ներառյալ շրջանակները մաքրում մետաղական խոզանակով	մ2	47,1	2,500	117,750	
11	Դարպասների և ճաղաշարերի ներառյալ շրջանակները փոշեզրկում	մ2	47,1	0,600	28,260	
12	Մետաղական կոնստրուկցիաների և ճաղաշարերի ներկում հակակոռոզիոն ներկով	100մ2	0,47	160,000	75,200	
13	Մետաղական կոնստրուկցիաների երկտակ ներկում Էմալե ներկով	100մ2	0,47	160,000	75,200	

	№ 10. Ներքին հարդարում					
1	Պատերի սվաղում գաջի շաղախով	100մ²	1,953	240,000	468,720	
2	Պատերի ներկում լատեքսով բարելաված որակի /ներառյալ անկյունակները / /անփայլ	100մ²	1,95	210,000	409,500	
3	Առաստաղի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100մ²	0,723	260,000	187,980	
4	Առաստաղների ներկում լատեքսով բարելաված որակի / /անփայլ	100մ²	0,723	210,000	151,830	
5	Պատերի և առաստաղի սվաղում ց/ավազե շաղախով	100մ²	3,1	260,000	806,000	
6	Դռների և պատուհանների շեպերի լավորակ սվաղում գաջով	քմ	21,07	3,900	82,173	
7	Դռների և պատուհանների շեպերի ներկում լատեքսով	քմ	43,47	2,400	104,328	
8	Դռների և պատուհանների շեպերի ց/ա լավորակ սվաղ	100քմ	0,224	260,000	58,240	
	№ 11. ՄԱՆՀԱՆԳՈՒՅՑ					
1	Պատերի սվաղում ց/ավազե շաղախով հաղճասալի տակ	100մ²	0,28	210,000	58,800	
2	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով ոչ պակաս - 4 մմ սոսինձ	100մ²	0,25	900,000	225,000	
3	Կախովի առաստաղի իրականացում -20-25սմ լայն,հարթ մակերևույթով մետաղական պրոֆիլների վրա սպիտակ /սանհանգույց/	մ²	5,5	8,500	46,750	
4	Արտաքին պատի մեջ օդափոխության անցքի բացում 150 մմ	հատ	1	1,100	1,100	
5	Օդափոխության օդատարի տեղադրում ՊԷ խողովակից 100 մմ ներառյալ կափույր և ցանցն	մ2	1,57	6,000	9,420	
	11. Աստիճանավանդակներ					
1	Աստիճանների միաձույլ բետոնե հիմքի պատրաստում բետոն-12,5 (2 հատ)	խմ	0,6	55,000	33,000	
2	Աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	քմ	0,9	17,000	15,300	
	№ 13. Մալվածք					
1	Բազալտե խճից նախաշերտ 5-40 մմ ֆրակցիայի, h=50մմ	մ³	3,5	9,500	33,250	
2	Բետոնե նախաշերտ 80մմ հաստությամբ B12.5	մ³	2,75	52,000	143,000	
3	Հրաթեցնող շերտի իրականացնում Մ100 20մմ	100մ2	0,35	240,000	84,000	
4	Մալվածքի երեսապատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	քմ	12,6	17,000	214,200	
	№ 14. Արտաքին հարդարում					
1	Ճակատների ներկում ճակատային բարելաված որակի /անփայլ ծեփամածկումով	100մ²	1,48	210,000	310,800	
2	Որմնախարիսխի երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ2	22,8	17,000	387,600	
3	Մետաղական ցանց, տեղադրումով երեսապատման համար Вр-4մմ ք.50x50	մ²	22,8	1,600	36,480	
Բաժին III	*№ 15.Բարեկարգում*				**488,500**	**1,6**
1	Բնահողի մշակում բուլդոզերով 3-կարգ տեղափոխելով 50մ	1000մ³	0,03	500,000	15,000	
2	Բնահողի մշակում բուլդոզերով 2-կարգ տեղափոխելով 40մ	1000մ³	0,013	400,000	5,200	
3	Տարածքի հարթեցում բուլդոզերով	100մ²	4	45,000	180,000	
4	Ծառերի արմատների քանդում տեղափոխելով 100մ	*100 ծառ*	*0,01*	*500,000*	*5,000*	
	Բետոնե ա/մ-ի հարթակL =3000մմ					
5	*Բազալտե խճից նախաշերտ 5-40 մմ ֆրակցիայի, h=100մմ*	մ³	3,5	11,000	38,500	
6	Բետոնե հարթակ ա/մ համար 180 մմ հաստ:	մ2	*20,4*	*12,000*	*244,800*	
Բաժին IV	*№ 16. Ներքին ջրամատակարարում*				**49,080**	**0,17**
	16.1 Մառը ջրամատակարարում					
1	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում փորձարկումով d=20*1,9մմ սառը ջուր	մ	6,6	1,200	7,920	
2	Ձևավոր մասեր/ֆիտինգներ/Φ20/	հատ	6	1,500	9,000	
3	Եռաբաշխիչ 20*20*20 /պոլիպ/	հատ	2	0,700	1,400	
4	Զուգարանային փականի տեղադրում d=15մմ	հատ	1	3,100	3,100	
5	Ճկախողովակ d=15մմ,L=0,5մ	մ	3	1,400	4,200	
6	Կցամաս 20մմ	հտ	6	0,500	3,000	
7	Անցքերի բացում պատերում L= 500	100հտ	0,01	50,000	0,500	
	16.2 Տաք ջուր					
4	Պոլիպրոպիլենային խողովակների d=20*3մմ փորձարկումով, /Տաք ջուր /PN10	մ	2,8	1,200	3,360	
5	Ձևավոր մասեր/ֆիտինգներ/Φ20--Φ50/	հատ	3	1,500	4,500	
6	Փականի տեղադրում օղագոտիով d=25մմ	հատ	1	3,600	3,600	
7	Լվացարանի ծորակի տեղադրում d=15մմ	հատ	1	7,500	7,500	
8	Կցամաս 20մմ	հտ	2	0,500	1,000	

Բաժին V	№ 17.Կոյուղագիծ				459,030	1,46
	17.1 Ներքին կոյուղի					
1	Բետոնի կազմաքանդում	մ³	1,8	12,000	21,600	
2	Խրամուղու փորում մեխանիզմով 3-րդ կարգի բնահողում	1000մ³	0,025	500,000	12,500	
3	Նախապատական շերտ ավազից 100մմ հստ	մ³	3,6	7,000	25,200	
4	3 -րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3	3,500	10,500	
5	Բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ³	0,02	350,000	7,000	
6	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=110մմ	մ	15	2,100	31,500	
7	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=50մմ	մ	3,2	1,800	5,760	
8	Եռաբաշխիչ 110*110*110	հատ	1	2,500	2,500	
9	Անկյունակ 50 135 Ե	հատ	2	0,900	1,800	
10	Անկյունակ 110 135 Ե	հատ	1	1,500	1,500	
11	Անկյունակ 50 90 Ե	հատ	1	0,800	0,800	
12	Պոլիվ անցում 110/50	հատ	1	1,500	1,500	
13	Պոլիվ ստուգիչ,մաքրիչ d=110մմ	հատ	1	4,000	4,000	
14	Պոլիվ ստուգիչ,մաքրիչ d=50մմ	հատ	1	3,500	3,500	
8	Լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	1	25,000	25,000	
9	Զուքարակոնքի տեղադրում բաքիկով	կ-տ	1	30,000	30,000	
10	Հոսակի տեղադրում Φ50մմ	կ-տ	1	3,500	3,500	
10	Ճկախողովակ սիֆոնով d=50 մմ	հատ	1	2,500	2,500	
	Հոր- Ե/ Բ Դիտահոր / 2հատ /					
11	Բազալտե խճից հիմնաշերտ	մ³	2,19	11,000	24,090	
12	Դիտահորի կառուց. հավաք. ե/բ օղակներից	մ³	0,54	55,000	29,700	
13	Ե/ Բ Դիտահոր 1000*1500	հատ	2	45,000	90,000	
14	Ե/ Բ Կափարիչ 1200*1200 մտոցով	հատ	1	80,000	80,000	
15	Ե/բ հավաքովի էլեմենտներով հորերում սեյսմակայունության մետաղա- կան կապող էլեմենտներ՝ երկտակ յուղաներկված՝ համաձայն ստանդարտ գծագրի. Անհրաժեշտ նյութերի մատակարարում և մոնտաժ	կգ	43,6	0,800	34,880	
16	Ճկախողովակ զուքարակոնքի d=100 մմ	հատ	6	1,500	9,000	
17	Անցքերի բացում պատերում	100հտ	0,01	70,000	0,700	
Բաժին VI	№ 18. Արտաքին ջրամատակարարում				217,830	0,66
1	Խրամուղու փորում մեխանիզմով 3-րդ կարգի բնահողում	1000մ³	0,05	500,000	25,000	
2	Նախապատական շերտ ավազից 100մմ հստ	մ³	2	7,000	14,000	
3	3 -րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	8,7	3,500	30,450	
4	Պոլիէթիլենային խողովակի տեղադրում d=20մմ PN10/փորձարկումով/	մ	15	1,200	18,000	
5	Խողովակների լվացում վարակազերծումով	1000մ	0,02	100,000	2,000	
6	Խողավակի վրայի շերտ ավազից 200մմ հստ	մ³	3	7,000	21,000	
7	Բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ³	0,01	350,000	3,500	
8	Միացում գործող ջրագծին	հատ	1	6,100	6,100	
9	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում փորձարկումով Φ40*2մմ ,	մ	4,1	1,500	6,150	
10	Խողովակների լվացում վարակազերծումով	1000մ	0,0041	100,000	0,410	
11	Մետաղ / պոլիէթիլեն անցում108/Φ90	հատ	1	0,500	0,500	
12	Մետաղ / պոլիէթիլեն անցում 89/Φ90	հատ	1	0,400	0,400	
13	Մետաղ / պոլիէթիլեն անցում108/Φ90	հատ	1	0,500	0,500	
14	Պոլիէթիլենի անցում Φ90/Φ40	հատ	1	0,350	0,350	
15	Սողնակի տեղադրում d=20 մմ	հատ	1	2,700	2,700	
16	Փականների տեղադրում d=20մմ	հատ	1	2,500	2,500	
17	Ավելորդ բնահողի մշակում էքսկավ, բարձելով ավտո/ինքնաթափ	1000մ³	0,0779	300,000	23,370	
18	Տեղափոխում 10կմ	տն	5	2,100	10,500	
	Ջրաչափական հոր / 1հատ /					
19	Ջրաչափական հոր	հատ	1	35,000	35,000	
20	DN15 ջրաչափերի մոնտաժում ջրաչափական հորում	հատ	1	7,500	7,500	
21	Մետաղական գնդային DN15 փականների մոնտաժում ջրաչափական հորում	հատ	1	2,700	2,700	
22	DN15 ֆիլտրերի մոնտաժում ջրաչափական հորում	հատ	1	2,000	2,000	
23	Պոլիէթիլենե պարուրակային կցորդիչների մոնտաժում DN20	հատ	1	1,700	1,700	
24	Երկկողմանի արտաքին պարուրակով մետաղական կցորդիչ DN15	հատ	1	1,500	1,500	

Բաժին VII	№ 19. Էլեկտրամոնտաժային աշխատանքներ				1532,595	4,7
1	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավ,0,5մ3	1000մ³	0,012	700,000	8,400	
2	3- րդ կարգի գրունտի ետլիցք ձեռքով	մ³	5,5	3,500	19,250	
3	Բնահողի հետլիցք մեխանիզմով	1000մ³	0,006	350,000	2,100	
4	Անկողնակի պատրաստում ավազից	100մ3	0,001	6,000	0,006	
5	Գոյություն ունեցող մալուխի տեղադրում խրամուղում	100մ	0,12	10,000	1,200	
6	Անցքերի բացում պատերում Φ100,L=600մմ	100հտ	0,02	50,000	1,000	
7	Եռաբևեռ եռաֆազինքնավար անջատիչ 380/220վ, 160Ա	հտ	1	8,500	8,500	
9	Մալուխի վերջույթ (ծայրակալ) ТМЛ-35-8	հտ	2	0,650	1,300	
10	Մալուխի վերջույթ (ծայրակալ) ТМЛ-6-6	հտ	1	0,550	0,550	
11	Մետաղե էլ, լուս,արկղ 800*600*300մմ/	հտ	1	9,042	9,042	
12	Պաշտպանիչ անջատման սարք երկբևեռ-220V ,25A/30mA, YZO)	հտ	1	5,000	5,000	
13	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հտ	4	1,300	5,200	
14	Ավտոմատ.անջատիչ միաֆազ 16Ա	հտ	6	1,300	7,800	
15	Ավտոմատ անջատիչ միաֆազ 6Ա	հտ	5	0,900	4,500	
16	էլեկտրատեխնիկական Մակառ 100x50մմ , տեղադրումով	100մ	0,18	30,000	5,400	
17	Գալարաձող Մ8	կգ	5,95	0,700	4,165	
18	Ինքնաձգող հեղյուսլ հարվածային 6x40մմ	կգ	83	0,750	62,250	
19	Հեղյուս տափօղակ մանեկով M8x20	կգ	32,3	0,750	24,225	
20	Մալուխային վաքի հորիզոնական անկյուն 100x50մմ	հատ	3	0,200	0,600	
21	Մալուխային վաքի ուղղահայաց անկյուն 100x50մմ	հատ	1	0,200	0,200	
22	Պրոֆիլ U-աձև 30x25 մմ (Unistrat)	գ/մ	5	0,450	2,250	
23	Դյուբել մետաղական, հարվածային M8x30 (Анкер забивной)	հատ	45	0,250	11,250	
24	Մալուխի անցկացում 1*16մմ2 ՎՎԳ	100մ	0,1	300,000	30,000	
25	Մալուխի անցկացում 5*1.5մմ2 ՎՎԳ	100մ	0,11	230,000	25,300	
26	Մալուխի անցկացում 3*2.5մմ2 ՎՎԳ	100մ	2,5	175,000	437,500	
27	Մալուխի անցկացում 3*1.5մմ2 ՎՎԳ	100մ	2,7	140,000	378,000	
28	Մալուխի անցկացում 1*6մմ2 ՊՎ	100մ	0,07	100,000	7,000	
29	Երկբևեռ խրոցակային վարդակ, երրորդ հողանցման հպակով, 220Վ,16Ա , պաշտպանիչ զսպանակավոր խողովակով, տեղադրումով	հատ	27	1,900	51,300	
30	Երկբևեռ խրոցակային վարդակ, երրորդ հողանցման հպակով, 220Վ,16Ա, պաշտպանիչ զսպանակավոր խողովակով, h=1.8մ, տեղադրումով IP55	հատ	3	1,900	5,700	
31	Մոնտաժային տուփ (վարդակի տուփ)	հատ	45	1,300	58,500	
32	Անջատիչ մեկստեղ 10Ա	հատ	4	1,600	6,400	
33	Անջատիչ երկստեղ 10Ա	հատ	2	1,900	3,800	
34	Փոխանջատիչ մեկստեղ. 10Ա	հատ	2	1,900	3,800	
35	Միացման տուփ	հատ	16	1,300	20,800	
36	Առաստաղային լուսատուի տեղադրում 1*18W ,LED լամպով	հատ	17	5,200	88,400	
37	Լամպ, 18W,LED		17	0,800	13,600	
38	Առաստաղային լուսատուի տեղադրում 1*12W ,LED լամպով	հատ	2	4,500	9,000	
39	Լամպ, 12W,LED		2	0,800	1,600	
38	Առաստաղային լուսատուի տեղադրում 1*25W ,LED լամպով	հատ	5	6,500	32,500	
39	Լամպ, 25W,LED		5	1,100	5,500	
40	Առաստաղային լուսատուի տեղադրում 1*18W IP54 ,LED լամպով	հատ	1	6,667	6,667	
41	Բռա 2 լամպանի 6վտ	կ-տ	1	4,550	4,550	
42	Պլաստմասե սակառների տեղադրում 16x16մմ	100մ	2	12,000	24,000	
43	Պլաստմասե սակառների տեղադրում 20x16մմ	100մ	0,24	15,000	3,600	
44	Պլաստմասե սակառների տեղադրում 40x16մմ	100մ	0,12	20,000	2,400	
45	Անցքերի բացում պատերում 400 մմ	100հտ	0,1	90,000	9,000	
	Հողանցում				0,000	
46	Հողակցում·անկյունակից 50x50x4,L=2,5մ	100հտ	0,06	1000,000	60,000	
47	Հողակցում շերտ.պողպ. - 40*4 մմ	100մ	0,27	210,000	56,700	
48	Հողանցում մետաղական խողովակ 76x3.0 մմ	100մ	0,009	310,000	2,790	
	Ընդամենը՝				**30666,667**	**100%**
	ԱԱՀ 20%				**6133,333**	
	Ընդամենը				**36800,000**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀՀՈՑ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Այպոշին» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
«Ակբա- բանկ» ԲԲԸ Լոռի մ/ճ
Հ/Հ՝ 2200533356870000
ՀՎՀՀ 06933045

/ստորագրություն/
Կ.Տ

«25» 08 Հավելված թիվ 2
2021 թ. կնքված
ՀՀՈՖ-ԳՀԱՇՁԲ-21/15 պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՀՄ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	«ՀՀՈՖ» ՓԲԸ Վանաձորի հեռուստակայանի վթարա-պրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակառուցում և վերանորոգում	-	-	-	-	-	-	-	-	-	-	36 800 000	36 800 000	36 800 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀՈՖ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 15700276099710100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԱՅՊՈՇԻՆ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
Ակբա-բանկ ԲԲԸ Լոռու մ/ճ
հ/հ 22005333687000
ՀՎՀՀ 06933045

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« » 2021 թ. կնքված
***ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/15** պայմանագրի*

Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	«ՀՀՌՑ» ՓԲԸ Վանաձորի հեռուստակայանի վթարա-պրոֆիլակտիկ ծառայության վարչական շենքի վերակա-ռուցում և վերանորոգում	-	-	-	-	-	-	-	-	-	-	100 %	100 %	100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀՌՑ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
«Ակբա- բանկ» ԲԲԸ Լոռի մ/ճ
Հ/Հ՝ 220053335687000
ՀՎՀՀ 06933045

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«25» 08 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/15 պայմանագրի

Պայմանագրի կողմ

____

____

գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու

____

____

գտնվելու վայրը ____________
հհ______________________
հվհհ____________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«25» 08 2021 թ. կնքված
ՀՀՈՑ-ԳՀԱՇՁԲ-21/15 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն